

ՔԱՌԱՔՆՆԱԿԱՆ ԳԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԼ. Ս. ՄԱՐԴԱՐՅԱՆ

Հայ լեզվաբանական գիտության զարգացման ու նրա ձևեր բերած նվաճումների հիմն աշ գերակշիռ, ապա մի պատկառելի մասը վերաբերում է հայերենի բառագանձի ուսումնասիրության բնագավառին: Հայոց լեզուն տրնաջան ու անգաղղրում հետազոտող գիտնականներն ու լեզվաբանները, բազմակողմանի քննությունների բովով անցկացնելով նրա բառային կազմը, ոչ միայն ի մի են բերել հայ բառարանային ոսկե ֆոնդը, այլև նույն հիմքի վրա քննել են հայերենի բառերի ծագման, առաջացման, բաղադրության ու փոփոխությունների հարցերը, այդպիսով հայ բառագիտությունը դնելով բարձր աստիճանի վրա: Սե՛ չին ու նոր Հայկազյան և Առձևոն բառարանները, թե՛ Նդելրուպական լեզվաբանության կարկառուն գեմքերի (Հ. Հյուրըման, Ա. Մեյլ և ուրիշներ) բառագիտական-ստուգաբանական հետազոտությունները, թե՛ Հր. Աճառյանի հայոց լեզվի ուսումնասիրության մեջ զարագլուխ կազմող աշխատությունները («Հայերեն գավառական բառարան», «Հայերեն արմատական բառարան» և այլն) և թե՛ Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանը» ինքնին դրա փայլուն ապացույցն են ու հաստատումը: Սակայն ինչպես այդ, այնպես էլ շնչված բառարանային ու բառագիտական այլ աշխատությունների մեջ բացառիկ տեղ է բռնում հայ լեզվաբանության հսկայի՝ Հր. Աճառյանի բազմահատոր «Հայերեն արմատական բառարանը», որը և, ամփոփելով իր մեջ հայ լեզվաբանական մտքի բառագիտական նվաճումները, հանդիսանում է հայերենի րասագանձի հանրագիտարանը:

Որքան էլ խոշոր ու նշանակալից լինի կատարված աշխատանքը, այնուամենայնիվ բառաստուգաբանության բնագավառում լեզվաբանները գեոու շատ անելիք ունեն:

Ահա այդ նկատառումով էլ փորձ ենք անում մեր ուժերի ներածի շափով կատարել մի քանի ստուգաբանական վերլուծություններ, շունենալով ամենևին այն հավակնությունը, թե նրանք բացարձակապես ճիշտ են և ենթակա չեն վիճարկման:

1. ՍԻՔԵԼ

Ինչպես Արմատական, այնպես էլ հայերենի այլ բառարաններում սմվել (քաշուիլ, ցամաքիլ, չորանալ) բառը գիտվում է իբրև շատուգաբանված բառ: Եվ միայն նոր Հայկազյան բառարանն է, որ սմվեցուցանելու ձևի տակ տալիս է հետևյալ ուշադրավ մեկնությունը. «Բառում է, որ սմվեցնել, որպես թի ցամաքեցուցանել, որպես և սմվել՝ է իբր ցամաքիլ, քաշուիլ»¹: Հր. Աճառյանը, նշելով հանդերձ, որ սմվիլ ձևը «գործածական է արդի գավառականներում», չի քնդուներ² ՆՀԲ-ի բացատրությունը, որը, սակայն, մեր կարծիքով միանգամայն ճիշտ է և իբրև այդպիսին էլ հաստատվում է մի շարք փաստերով:

Ցամաքիլ-ից սմվել ձևի առաջացման հիմնական ապացույցը նախ և առաջ նրանց իմաստային բնդհանրությունն է, որ արտահայտվում է ցամաքիլ, չորանալ նշանակությամբ: Բայց բնդհանրանալով հիմնական նշանակությամբ՝ այստեղ ևս երկու ձևերը չեն նույնանում և հանդես են գալիս իբրև հոմանիշներ, այդ մասին են վկայում, օրինակ, մեկի և մյուսի վերաբերյալ Ստ. Մալխասյանցի տված բացատրությունները. հմտ. ցամաքիլ.—1. ցամաք գառնալ, խոնավությունը կորցնել, 2. ջուրը պակասել, ջուրը չհոսել, 3. խոնավության պակասությունից թառամել, 4. նվազել, նվաղել, 5. գոռանալ, կուչ գալ, սմվել.—1. գոլորշին կամ ջուրը միջից քաշվելով՝ կուչ գալ, նստել, 2. թոշնել, ձորել 3. մարմնի ուռուցքի իջնելը՝ վերքը լավանալիս,

¹ «Նոր բառագիրք հայկադեան լեզուի», հատ. 2, էջ 724:

² Տե՛ս «Հայերեն արմատական բառարան», հատ. 6, էջ 300:

³ «Հայերեն բացատրական բառարան», հատ. 4, էջ 456:

4. կերածը ստամոքսի վրա ծանրանալ, չկարողանալ մարսել, սրտին նստել 5. կուշ գալ, նի-
հարել, փոքրանալ, 6. փոխ. երկյուղից ամոթից կուշ գալ, սրվել¹:

Բայց այդ բացատրություններից երևում է, որ նրանք միմյանց նկատմամբ այնուամեն-
այնիվ երևան են հանում իմաստային որոշ տարբերություններ, որոնք, սակայն, արդյունք են
սմբել ձևի, իրեն բռնածին բառային միավորի, արժեքավորման, որի հիման վրա էլ հենց նա
սահմանադրվել է «ցամաքել» ձևից և ինքնուրույն բառային արժեք ստանալով էլ տեղ
նվաճել հայերենի բառադանձում: Բայց այստեղից էլ հետևում է, որ այն իր բառային ինքնու-
րույն արժեքն ստացել է կենդանի բարբառների բուրբալում և այդ պատճառով հին մատենա-
գրության մեջ ըստ էության կիրառություն չունի և իր գոյությունը զգալ է ապիս միայն մաս-
նավոր գեպրերում:

Ցամաքել-ից սմբել ձևի առաջացման մյուս կարևոր ապացույցն էլ բաղաձայնից առաջ
ս-ի՝ ս-ի վերածվելու օրենքն է, որ դարձանալի կերպով գործուն է գլխավորապես այն բար-
բառներում ու խոսվածքներում (Պոլիս, Ղարաբաղ, Գորիս և այլն), որոնք ունեն սմբել ձևը:
Բայց պետք է նկատել, որ հայերենի այդ հատվածներում էլ միանգամից չէ, որ գ-ն վեր է
ածվել ս-ի և տվել սմբել, այլ, ընդհանրապես, մինչ այդ հայերենի բարբառների մեծ մասին
հատուկ՝ ձայնավորների անկման կամ սղման օրենքով ցամաքել-ը դարձել է ցամբել (Պոլիս),
ցմաբել (Ղարաբաղ, Գորիս), գրմաբել (Բեղրի), գամբել (Վան), ցամբել (Առտեալ), ցմբել
(Ննիս, Մուշ, Ալաշկերտ), որոնց հիմքի վրա էլ տարբերակմամբ առաջ է եկել սմբել, սմբիլ ձևը,
ինչպես՝ սմբիլ (Պոլիս), սմբիլ (Ղարաբաղ), սմբել, սմբիլ (Գորիս), սմբիլ (Կարին) և այլն:
Հնչյունափոխության համար հմտ. նաև սացանիլ > անցնիլ > ասնիլ, երիցակից > երիցակից >
երիսկից. ծոցաուր > ծոցուր > ձոսվուր, մուրացկան > մուրասկան, քացախիլ > քասիլ (Պո-
լիս), քացահան > խասխան, լուսցվիլ > լվասվիլ (Վան), զարմաց > զերմասկ, լուսց > լր-
վասկ, ուռուց > օռուսկ, լացկան > լվկան (Բեղրի) և այլն²:

Փանի որ բառամիջում, այն էլ մեծ մասամբ սղվող ա-ին նախորդող, գ-ն ս է տալիս,
նշանակում է դա հավասարապես կարող էր տեղի ունենալ բառասկզբում, և հենց դրա տիպիկ
օրինակն է սմբել (<ցմբել <ցմաբել <ցամաքել) ձևը, որ բավական շատ գործածվելու շնոր-
հիվ որոշ բարբառներում (նախապես Արարատյանում) դարձել է չմբել (սթսոամել, չորա-
նալ)³, ինչպես՝ «Ստիքի չմբած մորթի ծամծմոտելով...» (Պոլ. «Շահեն»), «Դարտի ձևորից
չմբած, կիսամեռ տանն քնկած» (Պոլ. «Հունոն») և այլն:

Այսպանից էլ հետևում է, որ սմբել բառի ծագման մասին նշԲ-ի տված մեկնությունը⁵
չիղա է և այն պետք է ընդունել:

2. Կ Ո Ւ Չ

Հայ հին մատենագրությունը չունի կուշ ձևը և այդ պատճառով էլ նրա մասին հին բառա-
րանները (Հին ու Նոր Հայկազյան, Առնեոն և այլն) ոչինչ չեն ասում. «Հայերեն արմատական
բառարան»-ն ալ այս գեպրում լուծ է, և միայն հայերենի զավառական բառարաններն (Հր.
Աճառյան—«Հայերեն զավառական բառարան», Ս. Ամատունի—«Հայոց բառ ու բան») ու
Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարան» են, որ նշում են նրա կիրառու-
թյուններն ու իմաստային նշանակությունները. այսպես՝ ըստ Հր. Աճառյանի զավառական
բառարանի՝ կուշ նշանակում է «սեղմումն, ամփոփվիլը. կը գործածվի հետևյալ ոճերուն մեջ»
— կուշ բերել առնել-երև. խոնարհեցնել: հպատակեցնել, բնկնել սարսափով կնւ— կուշ գալ— սրն.

¹ «Հայերեն բացատրական բառարան», հատ. 4, էջ 234:

² Օրինակների համար տե՛ս Հր. Աճառյանի «Գննություն Վանի բարբառի», «Քննու-
թյուն պոլսահայ բարբառի», «Գննություն Առտեալի բարբառի» հեռագրությունները,
ինչպես նաև Հր. Աճառյանի «Բեղրու բարբառ» ուսումնասիրությունը:

³ Տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն զավառական բառարան, 1913, էջ 882:

⁴ Օրինակները տրվում են ըստ Ս. Ամատունու. «Հայոց բառ ու բան», էջ 542:

⁵ Ս. Ամատունին բարբրել է պս. Այվազյանի՝ «Բառագնություն աշխարհիկ լեզուի»
անտիպ աշխատությունից առնելով «Այս բառի (սմբիլ—Ա. Մ.) ուղիղը կերել սմբիլ (այ-
սինքն ցամաքիլ), ինչպես որ կասեն Հայաստանի մեջ տեղ տեղ. Ի. Եղ. բառ., 111» հի-
շատակությունը, նույնպես ընդունում է, որ սմբիլ-ը ծագում է ցմբել ձևից («Հայոց բառ
ու բան», էջ 504):

Ղզ. Ղրբ. Տփ. ամփոփվիլ, ծուել, հավարվիլ, կծկվիլ—կուշ կենալ—կխց. կծկվիլ, մարմինը հա-
վարված պահել: Կուշկուշուտուիլ—Ղրբ. ամփոփվիլ, կծկվիլ, կուշկուշուիլ—Երև. կնճուկ, ծալը
ծալը բլլալ, մորթը կուշկուշուել է: Կուշ ու կուշ Ղրբ. կկգած, կծկված.—աենել, զալ: Կուշ ու
հուսլ Տփ. 1. կծկված, ամփոփված 2. ճնշված սեղմված ամոթահար սրտով.— տուն դարձան:
Կուշ ու ձիգ. շուրթորթ շարժումներ.— աենել, զալ՝ թծնել: Կուշուտ աենել Ղրբ. Սլ. Քչոտ աենել կամ
զալ Ղրբ. բուշուտել պպզել, կուշ զալ, կծկվել նստել, Հավը կուշուտ է աենել: Կրակի առաջը
կուշուտ էին արել:—Մասնիկին համար հմտ. ծակուտ՝. բստ Ս. Ամատունու բառարանի՝
«կուշ զալ կր. կուշուել, կր. վան կչոտ աենել Ղրբ. նյա. կծկիլ, սեղմուիլ, Փեսկն կուշ էկավ
ալբրի չուալի տակին. ...Կերայ պատի տակ բոտ հավու պէս կրկուծուրի. էմ. ազգ. ժող.
բ. 350, Կչոտ աենել. կուշ զալ. Զուտնա բ. 255, 46: Կուշ ու ձիգ աենել կր. կծկիլ ու ձգվիլ: Հազար
սարի որ կուշ ու ձիգ աենել, ձեզ բաց շենթ թողալ. հաշ. կր. Երկ. 211»²:

Նշելով այդ իմաստները, ինչպես Ս. Ամատունին, այնպես էլ հայ բառադանձի մեծ գիտակր՝
Հր. Աճառյանը շեն տալիս կուշ ձևի ծագումը. մինչդեռ մեր ձևերի տակ եղած փաստերն ու
ավյանները ցույց են տալիս, որ վուշ-ը այլ բան չէ, քան գրաբարյան տակավին անստույգ
գուն (սկոճն և ծալքն ծրնգաց. ծունկը. ծունք, ՆՃԲ, հ. 1, էջ 579, «Ծունկի կոճը, ծալքը»,
Արմ. բառ., հ. 2, էջ 300) բառի բարբառային տարբերակը, որ հայերենի զարգացման ընթաց-
քում հայթանակ է տարել բարբառների մի մասում և նրանց հիմքի վրա էլ հենց հաստատուն
սեղ գրավել արևելահայ գրական լեզվում:

Արդ՝ ինչո՞ւ է ապացուցվում կուշ (<գուճ) ձևի առաջացումը. ամենից առաջ գուն
ձևի նկատմամբ նրա ունեցած իմաստային սերտ կապով ու հարաբերությամբ: Եվ իրոք,
կուշ-ի արտահայտած բոլոր՝ «կծկում, ամփոփում, սեղմում», «կծկվել, սեղմվել, ամփոփվել»
և այլն, իմաստները կապվում են բացառապես գուն բառի ծունկ, ծնկի կոն նշանակության հետ:
Դրա լավագույն ապացույցներից մեկն էլ այն է, որ ինչպես գրաբարում գուն-ը, այնպես էլ հե-
տագումը դրանից առաջ եկած կուշ ձևը չունեն անկախ գործածություն և հանդես են գալիս
միայն ոճերի մեջ. հմտ. ի գունս իշանել, ի գունս հարկանել, ի գունս կալ, ի գունս անկանել,
ի գունս զալձ և կուշ ածել, կուշ կենալ, կուշ զալ, կուշ բնկնել, կուշ բերել, այլև կուշուձիգ
աենել, կուշ ու հուսլ աենել և այլն: Այստեղից էլ հենց պարզ երևում է, որ վերջին՝ աշխարհա-
բարյան ձևերը (հարադիր բայերը) մեծ մասամբ նույն գրաբարյան ոճերի զարգացումն ու
շարունակությունն են կազմում և, իբրև այդպիսին էլ, մի անգամ ևս հաստատում են գուն-ից
կուշ-ի ծագումը:

Իսկ դա էլ, պետք է ասել, տեղի է ունեցել հնչյունական համապատասխան օրինաչափու-
թյամբ, այսինքն՝ բառակերպի գ>կ-ի, բառավերջի ճ>չ-ի, ինչպես նաև բառամիջի ու>ո-ի
վերածվելու օրենքներով, որ առկա են մի շարք բարբառներում ու խոսվածքներում. հմտ.
օրինակ, Գ>Կ-ի համար՝ զինի>կինի, զոգ>կոֆ, զործ>կործ, զոնե>կոնյա, զետ>կէտ,
զինձ>կինձ (Գորիս), զոց>կոծ, զիւեր>կիշեր, զիտեալ>կիդեալ (Վան), զչձ>կէշ,
զարի>կարի, զոգ>կյէօղ, կօղ, կ'ղ (Համշեն). և>ո-ի համար՝ վուն>փոշ (Գորիս, Մեղրի,
Ղարաբաղ), փուն>փէշ (Ագուլիս), այլև՝ բառակերպում՝ նախարակ>շխարակ, բառամիջում՝
կենպ>էշէվ (Գորիս, Ղարաբաղ) և այլն. բառամիջի ու>օ(ո)-ի համար՝ ծուիւ>ծօիւ, հունձ>
ոօնձ, կուտ>կօտ, քուիւ>քօիւ (Ղարաբաղ, Գորիս) և այլն³:

Գուն կուշ ձևափոխությունը, սակայն, բարբառային իրողություններով չէ սոսկ հաս-
տատվում, այլ նրա մասին մեզ գեղեցիկ փաստեր են հաղորդում գրաբարն ու միջին հայերենը,
երևան հստակով գուն կուշ ձևափոխության բավական վաղ սկզբնավորումն ու զարգացման
ընթացքը. այսպես՝ հին մատենագրության մեջ լեզգիիլ (սկզբնական ծունկա՝ երկիր պազա-
նէր», ՆՃԲ, հ. 1, 766), լեզգիել (օրինակ՝ «Որոգայթ որսողին զինքն ընդձեաց», ՆՃԲ, հ. 1,
էջ 781) ձևերի կողքին լայն գործածություն ունի նաև քնկնել (օրինակ՝ «Յրուեա՝ զնոսա զչ-
րութեամբ բով, և քնկձեա՝ զնոսա», «Որ վաղվաղէ ընդդէմ բանից, նախ նա քնկձի», ՆՃԲ,
հ. 1, էջ 781) ձևը, որը և հիմք է տալիս գուն կուշ վաղ ձևափոխությունից բացի ընդհանրա-

¹ «Հայերէն զավառական բառարան», էջ 605—606:

² «Հայոց բառ ու բան», Վաղարշապատ, 1912, էջ 367.

³ Այդ ոճերի մասին տե՛ս ՆՃԲ, հտ. 1, էջ 573, այլև՝ Հր. Աճառյան, Հայերէն արմատական բառարան, հա. 2, էջ 300:

⁴ Ու<օ(ո) հնչյունափոխության մասին խոսում ենք կուշի-ի կօշ կամ կոշ բարբառ-
ային ձևերը նկատի առնելով:

պես բնդունելու բառակցքի գ ձայննդ պայթականի՝ կ խուլ պայթականի վերածվելու գոյությունը ինչպես գրաբարում, այնպես էլ նրանից առաջ: Անշուշտ գուցե՝ կուց վաղ ձևավորությունների լավագույն օրինակներ են նաև միջին հայերենի կուց և կուշ ձևերը, որոնցից առաջինը մենք գտնում ենք Նահապետ Քուչակի մոտ: «Խնձի՝ կուց, ա՛մ, էր կանես, երկնուցն գեմ չես իջեր» (Նահապետ Քուչակ, Հայպետհրատ, 1957, էջ 152), իսկ երկրորդը՝ Նաղաշ Հովնաթանի մի բանաստեղծության մեջ («Կուշ են կլած ինչպես հուրայ», Ն. Հովնաթան, Բանաստեղծություններ, 1952, էջ 123): Պարզ է, որ այդ օրինակներն էլ, ուրվագծելով գուցե՝ կուց վաղ ձևավորությունների բնթացքը, ոչ մի կասկած չեն թողնում՝ համոզվելու համար, որ իսկապես կուշ-ը ծագում է գուց ձևից:

3. Է Ն Կ Ի Ո Ն Ա

Իր «Հայերեն արմատական բառարանում» բնկիճեալ ձևի մասին Հր. Աճառյանը խոսում է երկու տարբեր առիթով. մի գեպում գուց բառի տակ «ծնրադրած» նշանակությամբ այն դիտում է իբրև գուց-ից ծագած բառաձև¹, իսկ մյուս դեպքում էլ² համարում է անստույգ բառ ՆՁԲ-ի հիշատակած՝ «Կայր նմա բնկիճեալ ի ճանապարհին», «Դու ինձ բնկիճեալ կայցես ի ճանապարհին» օրինակներին ավելացնելով «Նստես գ՛րեշտակն Տեառն բնկիճեալ նմա ի ճանապարհին» օրինակը:

Արդ՝ հարց է ծագում. անստույգ դիտվող այդ երկրորդ «բնկիճեալ» ձևը, որ բոտ ՆՁԲ-ի նշանակում է «Հակառակ կալ իբրև խոշ», «արգելք ըլլալ», չի՞ նույնանում առաջինին և նրա հետ հանդես գալիս իբրև բնկեցել բառի անցյալ դերբայաձևը:

Պետք է ասել, որ կուշ բառի մեր մեկնության ու նրա հիմքի վրա կարծում ենք, որ իրոք երկու դեպքումն էլ մենք գործ ունենք նույն բնկեցել (<բնգճել> <բնդգճել>) բայի անցյալ դերբայաձևի հետ, որ ոչ միայն հասկանալիում է նրան հատուկ «բնթերցվածներով» (հմմտ. ընդ-կիճեալ, բնկեցալ, բնգեցալ). այլև իր այն նշանակություններով, որ տալիս է ՆՁԲ-ը, բնավ չի անջրպետում նույն բնկեցել (ծունկի գալ, ծունկ չոքել, ծնկի տակ առնել, ճնշել) բայից:

Եվ իսկապես. չի կարելի չբնդունել, որ բնկեցել բայի ձևի տակ առնել, ճնշել, հաղթահարել և այլն, իմաստները բնականաբար կարող են նշանակել նաև՝ արգելք, խոչընդոտ լինել, մանավանդ որ սոսկ երեք անգամ հին մատենագրության մեջ գործածված «բնկիճեալ» ձևը ոչ թե առանձին, այլ կալ օժանդակ բայի հետ է, որ արտահայտում է այդ նշանակությունը: Եվ արևուտ-հետև. հենց այն հանգամանքը, որ հենց իր՝ Հր. Աճառյանի հաստատմամբ «շոթեցնել, հաղթահարել, նկուռ անել» տվորական նշանակություններից զատ բնկեցել բայը մի օրինակում («Վա՛յ է ինձ, դուստր իմ, բնկեցեցե ինձ, խոչընդոտն ելեր ինձ», Արմ. Բառ., հ. 2, էջ 1054) նշանակում է խոչընդոտ լինել, արգելք դառնալ, որոշակիորեն ցույց է տալիս, որ դա բնկեցել բառի մի երկրորդական իմաստն է, և հետևաբար այդ իմաստով գործածված «բնկիճեալ» դերբայաձևը ոչ միայն չի ուսմանազատվում մյուսից, այլ նրա հետ կազմում է մի միասնություն և բնականաբար էլ կազմում է նույն գուց արմատին:

4. Ճ Կ Ե Լ

Գուց արմատից ծագած զնիլ («ի գուճս անկանիլ և ի վերայ ծնգաց նստել. ծունք կրկնել՝ դնել, կճել, ճկել, չոքել», ՆՁԲ, հ. 1, էջ 563) բայը (հմմտ. Յոսիկ կանգնի զնկալն, Մաշտ. Գճի և համբուրճ զոտն սատանայի. Ոսկեփոր, ՆՁԲ, հ. 1, էջ 563), անցնելով զարգացման երկար ճանապարհ, կրել է որոշակի ձևափոխություններ: Եվ ահա զրանցից մեկն էլ ճկել (ծռել, վար խոնարհեցնել, թեթել և այլն) բայաձևն է, որի մասին գուցե հարկ չլինի խոսելու, եթե «Հայերեն արմատական բառարանում» գուց արմատի տակ բարբառներին վերաբերող բաժնում, որտեղ բերվում են միայն «Մշ. գ՛ջել «կէս մեշքից ծռել», Խրք. գ՛ջգիլ «զճել, ծռեցնել» ձևերը³, իր տեղն ունենալու նաև նախնական պետք է ավելացնել նաև այն, որ Գավառական բառարանում ճկել բառը նշանակված է ասողանիշով, որը և առել է թե՛ նա մեկն է այն ձևերից, որոնք «գրաբարի մեջ գոյություն չունեցող բոլորովին նոր արմատ մեր երևան կը հանեն»⁴:

¹ Տե՛ս «Հայերեն արմատական բառարան», հատ. 2, էջ 300:

² Անդ, էջ 1054:

³ Անդ, էջ 300:

⁴ Տե՛ս Հ. Աճառյան, Հայերեն գավառական բառարան, էջ 21:

Այնինչ լեզվական փոփոխությունները և տալիս, որ ցկիլ բաժանը իր հիմքերն ունի զրաբա-
շում և առաջ է եկել զուգ+ել>զկել>կեկել>ցկել բնթացքով, նախ՝ բառակազմի գ>կ-ի փերա-
վելու և ապա կե>ցկ գրափոխության (մեռաթիղիսի) օրենքների համապատասխան¹։ Վերջի-
նիս համար հմմտ. խառու>սխառու, նգիլ>գեկ>գցկ, եման>մնան, եշանգ>շնանց>
շնանց և այլն։

ձկկ (<կեկ<գեկ<գուեկ) ձկի առաջացումը, որ հիմնովին հաստատվում է հնչունա-
կան օրենքներով ու գեկ բառի նկատմամբ ունեցած իմաստային կապով ու հարաբերությամբ,
տեղի է ունեցել կենդանի խոսակցական լեզվի (բարբառների) բովում. բոտ որում նա ոչ թե
ուշ ժամանակի արտահայտություն է, այլ գալիս է հեռավոր անցյալի խորքերից և փոխա-
դարձ կապի մեջ է գտնվել զուգ+ելու (>կուշ) ձևափոխության հետ։ Գալով հեռավոր անցյա-
լից՝ ցկիլ ձկը, սակայն, ճիշտ միատեսակ բնթացք ու տարածում չի ստացել բոլոր բարբառ-
ներում։ Եվ իրոք, որոշ բարբառներ (Մուշ, Խարբերդ) պահել են հին գեկ ձկը², որոշ բար-
բառներ կորցրել են այն, իսկ մի շարք բարբառներում էլ (Երևան, Խոյ, Նոր Նախիջևան,
Պոլիս, Ղարաբաղ, Սփեղիս և այլն) լայն կիրառություն են ստացել ցկիլ-ն ու նրա հիմքի վրա
ստաց կեկած ձևերը, ինչպես, օրինակ՝ ցկեկել տեկ (Գորիս, Ղարաբաղ), ցկացեկ (Երևան,
Ղազախ, Գորիս և այլն), ցկուկ (Երևան, Գորիս, Ղարաբաղ և այլն), ցկուած, ցկուե, ցկվել և
այլն, որոնց մի մասն էլ անցել է մեր գրական լեզվին, ազդանշելով լեզվի բառազանձի հարու-
ստացման գործում գրափոխությունների խաղաղած դերն ու նշանակությունը։

5. Կ Ա Ք (ԻԼ)

Կար («շիթ. կալակ, կաթիլ») բառարմատի ծագման մասին հայտնվել են տարբեր կար-
ծիքներ³, դրանցից, սակայն, ոչ մեկն էլ ճիշտ չհամարելով՝ Հր. Աճառյանն այն դասում է չստու-
գաբանված արմատների շարքը։ Մինչդեռ լեզվական և մի քանի այլ իրողություններ թույլ են
ապիս մեզ հայտնելու այն կարծիքը, որ այս պարզապես գործ ունենր բնածալ-
նական ծագում ունեցող մի արմատի հետ։

Արդ՝ որն է դրա առաջին հիմքը, բնածանական բառերը, ինչպես ապացուցված է լեզվա-
բանական գիտության կողմից, արդյունք են բնական երևույթների, առարկաների, կենդանի-
ների և այլնի հետ կապվող ձայնի բնկալման և այդ պատճառով էլ նրանց տրված անունը սո-
փորաբար համապատասխանում է նույն ձայնի բնույթին. հմմտ., օրինակ, հայերեն՝ կկու, սանս.
kokiš, koka, լատ. cuculus, ֆրանս. coucou, անգլ. cuckoo, գերմ. Kuckuck, պրս

کوکو kōkū, քրդ. kiku⁴, հյ. մլաւ(էլ), թրք. miau, քրդ. meu, meuzin, պրսկ. mav,
ֆրանս. miauler, ռուս. мяука́ть, արաբ. mava⁵, հայերեն՝ խոխոջել, ռուս. журчать...
Այս տեսանկյունից էլ հենց նախկին կար արմատի ծագման հարցին, մենք տեսնում ենք, որ ինչպես
կկվի հանած ձայնի համապատասխանում է նրա անվանը, կաթվի հանած ձայնը՝ նրա մկավի-
րուն, գետի կամ առվակի ձայնն էլ՝ նրա կարկաչին, այնպես էլ ջրի ծորալու, շիթ առ շիթ բնկ-
նելու ձայնն էլ համապատասխանում է կար անվանմանը, որ, սակայն, շատ ավելի պարզ
երևում է կրկնավոր՝ կար-կար, կարկրել, կարկուր ձևերում։ Ավելացնելով սրան այն, որ հայե-
րենի ստուգաբանված 152 բնածանական բառերի մեջ կա(կ) պարզ ձայնով կազմված բնածան-
ները զգալի տեղ են բռնում (հմմտ. կակաե, կակաչել, կառանչել, կառաչել, կառկաչել, կկու,
կոչել, կոչել, կրկալ, կրեկ և այլն) և մինչև անգամ կակաչ («ջրերի կարկաչահոտ տեղ»,
Հր. Աճառյան, Արմ. բառ., հ. 3, էջ 875) ձկը կապվում է հենց ջրի ձայնի հետ, ավելի ենք
համոզվում կար արմատի բնածանական լինելու մեջ։ Եվ անշուշտ դրանով էլ հենց պայմանա-
վորվում են այն ընդհանրությունները, որ Երևան է հանում հյ. կար արմատը ցկալակից և ոչ
ցկալակից շատ լեզուների համապատասխան տվյալների հետ, ինչպես, օրինակ՝ հյ. կար, կարիլ,
լա. gutta, ֆր. goutte, արաբ. գադլե, սանս. gad (ամգել, կաթել, կաթիլ), Արմ. բառ.,

¹ Պետք է ասել, որ դեռևս տարիներ առաջ այդ նկատել է Մ. Արեղյանը, ասելով.
«հին գեկ զարձել է ցկել» (Հայոց լեզվի տեսություն, էջ 99)։

² Ս. Բաղդասարյան—Թափալցյանի «Մշո բարբառը», (Երևան, 1958) աշխատանքում
գեկի-ի դիմաց տրված է նրգել (տե՛ս էջ 250)։

³ Տե՛ս Հր. Աճառյան, Հայերէն արմատական բառարան, հատ. 3, էջ 843—846։

⁴ Տե՛ս անգլ. էջ 1230։

⁵ Տե՛ս անգլ. հատ. 4, էջ 1059։

հ. 3, էջ 845), ուսու. капъ, ուկ. капля, բելոս. капка, լեհ. kapla¹, այլև անդլ. drop («կաթ, կաթիլ»), drop dr. p («կաթ-կաթ»), բրդ. alon («կաթիլ»), alon-alon («կաթիլ-կաթիլ»), alon-alonu («կաթիլի»)² և այլն:

Այս բոլորից բացի, սակայն, կար բառի բնածայնական ծագման վրա շատ ավելի որոշակի լույս են սփռում հայերենի բարբառները՝ իրենց կար (Ալաշ. Ախց. Գոր. Երև. Ղրբ. Շմ. Զդ. Տփ. Մեղր.) կօր, կօր-կօր (Անդլ.), զոյր (Խրբ.), զօր (ՀՃ), զուր (Սվեդ.), այլև կաթիլ (Գոր. Մեղր.), կարիլ (Եր. Մկ.), կարիլ (Ախց.), զարիլ (Սեբ. Սուշ.), զարիլ (ՀՃ. Բ. Սեբ.) զարիլ զարիլ (Զթ.), զարիլ (Խրբ.) և այլն ձևերով: Ըստ որում այստեղ կարևորագույնը հենց կարիլ նշանակությամբ կար ձևի (այն էլ գերակշիռ չափով), անկախ գործածությունն է, բանի որ նա է, որ իր մեջ ավելի վառ է զրսևորում բնածայնության նախնական իմաստը և երևան հանում զրա ծագման զաղտնիքը: Իսկ ինչ վերաբերում է կարիլ ձևին, ապա պետք է տեսլ, որ նա կար արմատից և իլ ածանցից (հմտ. տնս—տեսիլ) բաղադրված բառ է³, որտեղ, սակայն, կարծում ենք, իլ-ը նախապես ոչ թե ածանց, այլ բայական մասնիկ է եղել: Այստեղից էլ ենթադրել կարելի է, որ կարիլ ձևը զրսևորել է իր մեջ գործողության իմաստ և նշանակել է ջրի շիթի, կաթիլի բնկնելը, բայց հետագայում բառիմաստի զարգացման հետևանքով դա մթագնվել է, և երբեմնի բայը դարձել է գոյական:

6. Տ Ե Ղ Ե Ա Կ

Տեղեակ (սՀմտ. խելամուտ, գիտակ. բանիբուն. ներհուն. հասու. ծանօթ. փորձ. տեղն ի տեղը գիտցող, նՀԵ. հ. 2, էջ 864) բառի ծագման և կազմության մասին բոլորովին հարկ չէր լիսի խոսելու, եթե «Հայերեն արմատական բառարանում», որը հայ լեզվաբանական գրականության գեղեցիկ պսակն է և հայ բառագանձի զաղտնիքները մեզ հաղորդող շգեբազանցված աղբյուրը, նախ՝ նՀԵ-ի հակառակ այն շղիտվեր իրրև անստույգ⁴ և ապա՝ անտեսված չլինելու նրա տառական հրատարակումից հետո մեծ հայազետի ու լեզվաբանի կատարած նոր ստուգաբանությունների, ճշտումների ու պարզաբանումների շարքում: Այս հանգամանքից էլ ահա մղված մենք գտնում ենք, որ տեղեակ (տեղյակ) բառը, որի համար Հր. Աճառյանը նշում է միայն «հմտ. խելամուտ, գիտակ» նշանակությունները, ոչ թե անստույգ, այլ հնիս. sedlo ձևից ծագող տեղի արմատից և ակ ածանցից բաղադրված բառ է, որպիսի կազմությանը և, խորթ չլինելով հայերենին, որի մեկնություն չի պահանջում. հմտ. պատանի ակ>պատանիակ> պատանակ> պատանյակ, որդի+ակ> որդիակ> որդեակ> որդյակ, տեղի+ակ> տեղիակ> տեղեակ> տեղեակ+իլ> տեղեկիլ և այլն: Ուրեմն՝ տվյալ դեպքում՝ տեղեակ (<տեղի+ակ, հմտ. խելամուտ, գիտակ) բառի ծագման հարցը կարելի է պարզել միայն իմաստային կողմի վերլուծությամբ և այն ելակետից, թե իրոք տեղի+ակ բաղադրիչների գումարը կարո՞ղ էր նշանակել հմտ. խելամուտ, գիտակ և արդյոք այդպիսի իմաստներ կարո՞ղ էր առաջ բերել ակ ածանցը՝ արմատի վրա դրվելով:

Նախ՝ այս վերջինի մասին. հայտնի է, որ ակ ածանցը սոսկ նվազական, փաղաքշական կամ նվաստական նշանակությամբ չէ, որ հանդես է գալիս, այլև հաճախ արմատների վրա զրվելով՝ կազմում է տարրեր բառեր հատկանշային, գործողի, մի բան անողի նշանակությամբ⁵, ինչպես, օրինակ՝ ունակ, բնդունակ, բուժակ, գիտակ և այլն: Ծիշտ այդ ձևով էլ ահա ակ ածանցը զրվելով տեղի արմատի վրա՝ նրան տվել է տեղն իմացող, տեղն զիտցող իմաստը, որը և իր զարգացման ընթացքում վեր է ածվել «հմտ. խելամուտ, գիտակ» նշանակության: Բայց, երկրորդ, անգամ այս դեպքում էլ տեղեակ բառի տեղ (տեղի) արմատը չի կորցրել իր

Ուլազնական լեզուների օրինակների մասին տե՛ս Ա. Գ. Պրեդերաժենսկու «Этимологический словарь русского языка» աշխատությունը (Մոսկվա, 1958), որտեղ հեղինակը ասում է. «Судя по рус. мждм. кап! кап!, можно допустить звукоподражательное происхождение» (էջ 294):

² Բրդերենի օրինակների համար տե՛ս «Հայ-բրդերեն բառարան», Հայպետհրատ, 1957, էջ 168:

³ Հմտ. նաև կաթ-կաթուկ, շոուկ, թմբուկ, այլև՝ կաթոց, խշոց, վշոց և այլն:

⁴ Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հատ. 6, էջ 859.

⁵ Տե՛ս այդ մասին Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1931, էջ 244—245:

աբժեքն ու իրավունքը, այլ, ընդհակառակն, շարունակում է ցուցահանել այն նախնական գերը, որի հիմքի վրա առաջ է եկել մեզ հետաքրքրող նշանակությունը, եվ հենց այս փոխհարաբերության մեջ էլ պարզ երևում է. որ մի բանի տեղյակ լինելը հենց նրա տեղը գիտենալ, խմանալ և հետևաբար՝ խնդրամուտ, հմուտ, զիտակ լինել է նշանակում. և, ընդհակառակն, եթե որեւէ մեկին հայտնի չի խոսակցության առարկայի տեղը՝ իր բոլոր կողմերով, նշանակում է նա տվյալ դեպքում անտեղյակ է և հետևաբար՝ գիտակ. հմուտ ու խելամուտ չէ:

Նման պատկերացումները, անշուշտ, գալիս են հեռավոր անցյալի խորրերից և անխզելիորեն կապվում են տեղի (լինի որսի, բնակության, հսկառակոդների, կրակի, անտառի, գրի, պառքս-պարզելու և այլն) հետ և բնականաբար պայմանավորվում են այն մեծ զեբով, որ խաղացել է նա մարդու կյանքում: Այս իմաստով հմամ, նաև նույն տեղ արմատից և ակ առանցից կազմված տեղյակ (սփոխարեն», սփոխանակ») բառը, որ նույնպես լայն կիրառություն ունի խոսակցական լեզվում:

7. 2 U F B

Չամբ բառը՝ իր Ջերալդայի բարերի շուրջը նստած ալյուրի փոշին, որ հավաքում և շներին համար հաց են թխում»¹, ալյուրի բարակ փոշի, որ կնստի չաղացքին երկանաբարերուն և շուրջը»², Ջերալդացաբարի շուրջ կողմովը նստած ալյուրի փոշին, որ հաց թխելով տալիս են շներին»³ նշանակությամբ, անշուշտ, հայերենի հնագույն բառերից մեկն է, որ թեև չի ավանդված հին մատենագրության մեջ, բայց պահվում է որոշ բարբառներում. հմմտ. զամբ (ծրեան), զամբ (Գբրիս), զեմբ (Ղարաբաղ, Մեղրի) և այլն: Կարծում ենք, որ դա ամպ (<ամբ) արմատից և զ—խաղերից կազմված մի բառ է, որ առաջ է եկել որոշ օրինաչափ հիմքի վրա. հայտնի է, որ զ նախդիրը զրվելով այլևայլ արմատների վրա՝ նրանց մեծ մասամբ տվել է իմաստային նոր երանգ ու նշանակություն. հմմտ. զգալ<զ+գալ, զեռալ<զ+եռալ. զգոյշ<զ+գոյշ. սփռել<զփռել<զ+փռել. զետեղել<զ+ետեղել. զարգ զ+արյղ, զամպ<զ+ամպ (հմմտ. ամպ ու զամպ): Բայց հենց այս վերջին օրինակում էլ, եթե զ—նախդրի հավելմամբ սաստկացվել է ամպ բառի իմաստը, և զամպ—ը, արտահայտելով ամպի խտացած վիճակը, սկսել է նշանակել լեռների վրա դիրված ձյունը»⁴ նշանակությունը, ապա զամբ ձևն էլ բառային ինքնուրույն արժեք է ստացել փոխարենական նշանակության՝ ամպի և ջրաղացի բարերին ու նրանց շուրջը նստած ալյուրի փոշու միջև եղած նմանողության հիմքի վրա: Եվ հենց այն հանգամանքը, որ ալյուրի փոշին նստելով ջրաղացի բարերի, ձողերի վրա ինքնին տեղիցում է ամպի կամ նրա սպիտակ քուլանների պատկերը, ենթադրել է տալիս, որ մարդիկ այն նմանեցնելով ամպին՝ կազմել են զամբ բառը, որի մեջ էլ, պետք է ասել, ի տարբերություն ամպ և զամպ ձևերի, անաղարտությամբ է պահպանվում հնագույն և ուղղագույն ամբ (<mblio) ձևը⁵:

8. S P N Φ E L

Մի շարք փաստեր, որոնց կանցնենք բիշ հետո, ցույց են տալիս, որ հին մատենագրության մեջ գործածական տրոփվել, տրոփական, տրոփվին, տրոփումն բառերի տրոփ արմատը բնածայնական է, և հետևաբար այն ևս մտնում է հայերենի բնածայնական ծագում ունեցող արմատների շարքը: Դրա առաջին և հիմնական ապացույցը նույն արմատի բնածայնական իմաստ արտահայտելն է, որը և հաստատվում է բառարանների տված ճիշտ մեկնություններով. այսպես՝ բստ նձԲ-ի տրոփել (դա ունի նաև սոճոփել տարբերակը) նշանակում է առժգին ի վերայ վազել, և ուսումամբ կոխտտել, կոխան ատնել, դոփել, կայթել, դրնդել, թնդել, չառաչել:

¹ Ստ. Մալխասյանը, Հայերեն բացատրական բառարան, հ. 2, էջ 6:

² Հր. Աճառյան, Հայերեն գաղափարական բառարան, էջ 315:

³ Ս. Ամասունի, Հայոց բանու բան, էջ 185:

¹ Տե՛ս մեր «Հ» նախդրի բառակազմական արժեքը՝ հոդվածը (Հայկական ՍՍԻԴՒՒՔԱ «ՏԼԿԵԿԿԻՐ», 1958, № 8, էջ 75)։ Ի դեպ հուրկ ենք համարում նշել, որ այնտեղ «զ» նախդրի բառակազմական արժեքի լայնահայտման կապակցությամբ արված մեր բառաբանական պիտոցությունների մի մասը կարիք է զգում վերանայման ու ճշտման։

⁵ Հմմտ. չ. Լճառյան, Հայերէն արմատական բառարան, հ. 1, էջ 234:

⁸ «Նոր րառագիրք հայկազեան լեզուի», հ. 2, էջ 898:

տրոփիւն և տրոփումն նշանակում են «տրոփելն, ոսնածայն կոխուման, կայթին, թնդին»¹, իսկ Արմատական բառարանում էլ տրոփ արմատի տակ կարգում ենք. «Սրտի թնդին, բաբախին»։ Գործածական է միայն արդի գրականի մեջ. հնեքի մեջ արմատ անգործածական, որից տրոփել «տրեքով կոխումն» Ոսկ. մտթ. և փիլիսոփ. տրոփիւն սրտի կոխուման կամ կայթիւն ցատկոտելու ձայն, թնդին» Ոսկ. Մ. Բ. 23., տրոփական 34. կր., տրոփումն նար. հշ. Փարգատրոփ, ծանրատրոփ լեռնաշղթան խաղ կամ եղանակ» Ոսկ. զրված է նաև տրփալ (տխ. տրոփել) «սիրտը բարախել» Յեյսմ. մայ. 4. տրոփել Ոսկ. ա. տիմ. Բ. Երտատրոփ կամ սրտատրոփ Շնորհ. ոտնատրոփ կամ ոտնատրոփ Սխիան. Արծր»²։

Այսպիսով տրոփ արմատը իսկապես համապատասխանում է ոտքերի կոխուման, ցատկոտելու ձայնի. թնդունի բնույթին և պարզապես հանդիսանում է նրանց անունը, ուր այլ նշանակությամբ այն արտահայտում է նաև սրտի թնդունը և բարախունը, որի մեջ, սակայն, որ կարևոր է, չի բացառվում դարձյալ տրոփ (կամ տրոփ-տրոփ) ձայնը։

Մեր երկրորդ ապացույցն էլ այն է, որ ինչպես ոտքի զարնումից, այնպես էլ սրտի բաբախումից առաջացած ձայնին տրված տրոփ, տրոփել, տրոփյուն, տրոփումն և այլն ձևերը ոչ միայն չեն հակասում հայերենի բնածայնական բառերի կազմության ոգուն և մնում իբրև բացառություն, այլ, բնահատուկ, հանդիսանում են նրանց զրոտման արտահայտություններին մեկը և, ասենք, դոփել, դոփիւն, դոփումն, ճողփիւն, այլև բամբիւն, բմբիւն, բմբիւն և այլն, ձևերի հետ մի բնահատուկ խումբ են կազմում։ Անշուշտ, այդ մասին է վկայում և «իւն» ածանցը, որ սովորաբար հանդես է գալիս բնածայնական արմատների հետ. հմտո, բաշիւն, զանգիւն, դղիւն, դրդնիւն, դրդիւն, խօշիւն, պոշիւն և այլն³։

Եվ հենց այստեղ էլ պետք է ասել, որ տրոփ արմատի բնածայնական ծագման մեր երրորդ ապացույցն էլ նրանից կազմված բարբառային տարածություններն են, ինչպես, օրինակ, Մուշ աւրպալ, Ագուլիս՝ տրոփալ, Երևան՝ տրփալ Ալաշկերտ՝ րփալ և այլն⁴։ Բայց հենց այս վերջին օրինակի վրա հենվելով՝ գրանց շարքը պետք է դասել նաև Ղարաբաղի, Գորիսի բարբառներում և այլուր գործածական՝ րփալ («մեծ ձայնով բնկնել»), րփալրփալ (1. սրտի բարախյունը 2. բարձր ձայնը հանելը), րփալացնել (1. ահագին ձայնով գետինը զարնել 2. ծեծել, զարկել 3. ուժեղ ձայն հանել), րփալ-րփալ անել («սրտի բարախելը»), այլև ր-ի հապավմամբ առաջ եկած րփալ («բնկած իրի ձայն հանելը»), րփալրփալ, րփալացնել, րփալրփալի («զոգնելով, տրեքուն ձայնները հանելով») ձևերը⁵, որոնց մեջ էլ ավելի ուժեղ ու զգալի է բնածայնության ոգին։

Վերջապես այլ լեզուների ոչ քիչ համապատասխան բնածայնական ձևերը, հմտո, հայերեն՝ տրոփ, տրոփել, ոռու. СТУК-СТУК, СТУКАТЬ, ուկ. СТУК, րեյոռ. СТУКАЦЬ, լեհ. stuk, stukac և այլն⁶, ևս իրենց հերթին ցույց են տալիս, որ հայերեն տրոփ (տորոփ) արմատն իսկապես բնածայնական ծագում ունի։

9. Չ Թ Ե Լ

Չոնի («Աշերեր, մատներ, բերանը լայն լայն բանալ», Հր. Աճառյան, ՀԳԲ, էջ 887. «մատերի, աշերերի, ոտքերի լայն բանալը», Ս. Ամատունի, Հ. բառ ու բան, էջ 545, «1. լայն բանալ, ձգտեցնել 2. աշերեր զարմանքից կամ սարսափից լայն բանալ», Ս. Մալխասյանց, ՀԳԲ, հ. 4, էջ 31) բառը պրոֆ. Հր. Աճառյանի վկայությամբ գործածական է Երևանի, Ագուլիսի, Ղարաբաղի և Թբիլիսիի բարբառներում, անշուշտ, այն չի բացառված նաև այլևայլ խոսվածքներում և մինչև իսկ, կարելի է ասել, իր տեղն ունի գրական լեզվում և ազատորեն գործ է ածվում գրողների կողմից։

¹ Նոր բառագիրք հայկազեան լեզուի, հ. 2, էջ 898։

² Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 6, էջ 1014։

³ Բնածայնական բառերի մասին տե՛ս Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ. 1, էջ 114—116։

⁴ Տե՛ս մանրամասն Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 6, էջ 1015։

⁵ Դրանց նշանակությունների համար տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն գաղառական բառարան, էջ 384, 369։

⁶ Տե՛ս Ա. Գ. Պրեորաժեւսկի, Этимологический словарь русского языка, էջ 107—108։

Պրոֆ. հարց է ծագում. շնել-ը, որ բացակայում է հին մատենագրության մեջ, հայերենի դրավոր չավանդված հնագույն բառերից մեկն է, թե՛ պարզապես հանդիսանում է որևէ հին ձևի ալլափոխությունը. չդասվելով փոխառությունների շարքը, պարզ է նա կարող է կա՛մ մեկը և կա՛մ էլ մյուսը լինել: Եվ ահա մի շարք փաստեր ցույց են տալիս, որ տվյալ դեպքում այն ուղղակի ներկայացնում է հետագայում գործածությունից դուրս մղված գրաբարյան աղաճել (սակն առնել, ակն ածել, պատկառել, շնորհս առնել ումեր. մարդահաճել, նաթ, հ. 1, էջ 266, «1. ակն ածել, պատկառել 2. երեսպաշտություն անել», Ստ. Մալխասյանց, ՀԲԲ, հ. 1, էջ 199) բայի հապավված ձևը, որ առաջ է եկել աշառել>շառել>շոնել ընթացքով: Դա, ամենից առաջ, հաստատվում է բառասկզբի ա ձայնավորի անկման այն հայտնի օրենքով, որ գործուն են հայերենի մի շարք բարբառներում ու խոսվածքներում. այսպես՝ համատ.

Գրաբար	Աղոուլիս	Գորիս	Մեղրի
ածելի	ծէ՛լի	ծի՛լի	ծի՛լէ
անալի	նա՛լի	նա՛լի	նա՛լէ
սքացի	քա՛ցի	քա՛ցի	քա՛ցէ
ապաշխարող	բըշխա՛րուղ	բըբշխա՛րուղ	բըշխա՛րուղ և այլն:

Եվ այնուհետև. դրան ավելանում է յառասկզբի բաղաձայնին հաջորդող ու ձայնավորի անկման կամ սղման օրենքը, որի վերաբերյալ, ճիշտ է, կարելի է բերել շատ օրինակներ, ինչպես՝ շառշառել>շըշառել (Ղարաբաղ, Գորիս), շալակել>շլու՛կիլ փափկիլ>փրփիլ, կապալի>կպրալի (Աղուլիս) և այլն, բայց դրա հարկը բոլորովին էլ չի զգացվում. որովհետև ստաջին խմբի որոշ ձևերի մեջ էլ նկատելի է նույն ա-ի անկման (կամ սղման) երևույթը, որը և հիմք է տալիս ասելու, որ աշառել-ից օրինակափոխեն առաջ եկած շառել ձևի մեջ ևս երկրորդ ա-ն կարող էր ընկնել, և դա հենց այդպես էլ տեղի է ունեցել:

Աշառել բայից աշառել>շառել>շոնել (շոռել) ընթացքով շոնել ձևի առաջացման մյուս նկատմամբ ապացույցը այս դեպքում ևս իմաստային այն սերտ կապն ու հարաբերությունն է, որ գոյություն ունի նրանց միջև: Այսպես՝ հայտնի է, որ շոնել բայի հիմնական նշանակությունն է՝ աշխեր լայն բացած ու սևեռուն նայել. Երկուր ժամանակ հայացքը շինոացնել նույն կետիչ-ինսկ այդ ամբողջն էլ կարող է արվել թե՛ «մարդահաճելու», «երեսպաշտություն անելու», թե՛ «ակն առնելու, ակն ածելու», թե՛ «պատկառելու և թե՛ այլ նկատառումներով: Եվ քանի որ դա այդպես է, և հենց «շոնել» բառի մեջ որոշակիորեն դրսևորվում է «ակն առնելու», «ակն ածելու» իմաստը, նշանակում է այն իսկապես աշառել բայի հապավված ձևն է, որը և, կրկնակի փոփոխության ենթարկվելով, ոչ միայն բավականին հեռացել է իր նախավոր ձևից, այլև բառիմաստի զարգացման քուրայում տվել է իմաստային տարբերակումներ, արտահայտելով միաժամանակ «մատերի, ոտերի լայն բանալը» երկրորդական նշանակությունը:

Դեռ ավելին. որոշ դեպքերում նա արտահայտում է բացասական իմաստ (օրինակ՝ ՏԵԱ. ինչպես է աշբերը շոնել մեզ վրա), որը և, կարծես թե, ինչ-որ կապ է նշմարում շառ (ՂԲԲ. «անասուններու հիվանդություն մ'է, որով կը ճաթի և կը սատկի», Հր. Աճառյան, 296, էջ 877) բառի հետ, որ սովորաբար գործ է ածվում անեծքների մեջ, ինչպես՝ շառը օնի շառը տանի քեզ, շառը կալել է նրան և այլն:

10. Շ Կ Ա Կ Ե Լ

Շկակել ձևի մասին, որ առաջին անգամ տեղ է գտել «Հայերէն գավառական բառարանում», Հր. Աճառյանը հետևյալ հիշատակությունն է անում. «Շկակել Ղրբ. արագ վազել. Շկակած գնաց»²: Նույն բացատրությունը գտնում ենք նաև Ստ. Մալխասյանցի «Հայերէն բացատրական բառարանում», որտեղ միայն հավելման կարգով շկակել-ը դիտվում է իբրեւ ներգործական սեռի բայ³:

¹ Աղուլիսի բարբառի օրինակների համար տե՛ս Հր. Աճառյանի «Քննություն Աղուլիսի բարբառի» աշխատությունը, իսկ Մեղրու բարբառի օրինակների համար էլ՝ Է. Աղայանի «Մեղրու բարբառը»:

² Անդ, էջ 832:

³ Տե՛ս Ստ. Մալխասյանց, Հայերէն բացատրական բառարան, հ. 3, էջ 526:

սակայն, նախնական ձևը, իսկ երրորդ դեպքում էլ նա, ընդհակառակն, իր լիակատար հաղթանակն է տարել և ապահովել միայն պլպլալ ձևի իրավունքը:

Այս բոլորից էլ հետևում է, որ փայլ արմատից կազմված կրկնավորները ինչպես ձևի, այնպես էլ իմաստի տեսակետից հայերենի պատմական զարգացման ընթացքում կրել են զգալի առաջադարձներ, որոնց հետ էլ կապվում է նաև պլպլալի (բոցափայլ), պլպլան (սփափափություն), պլպլացնել (սլառել, բորբոքել), պլպլուն (շողշողուն, փայլուն), պլպլուֆ (սճրագի առկայծումը) և այլն. բառերը¹, որ գործ են ածվում մի շարք բարբառներում:

Նման տեղաշարժներից չէին կարող զերծ մնալ և զերծ չեն մնացել նաև փայլ արմատի մյուս տարբերակներով՝ փաղ, փող, արտահայտված կրկնավորները² (իմա՝ փաղփաղիլ «փայլել, ցուլցալ», փաղփաղուն «փայլուն», փաղփաղեալ «փայլելով», փաղփաղող «փայլուն», փողփողել փայլել, շողշողալ»), և մեր կարծիքով՝ պսպղալ (սփափել, փայլափալ), պսպղահ (սփայլուն), պսպղացնել (սփայլեցնել), պսպղին տալ (ցուլալ, փայլել), պսպղոց (սփայլ, շողշողումն), պսպղուն. պսպղտուն, պլպստուն (սփայլուն, փայլափուն), պսպսալ (սփայլափել), պսպոտալ (սփայլիլ, մաքրությունն փայլել), այլև պսալ (սփայլել, փայլափալ) և այլն բառերը³ հենց նրանց հետագա ձևափոխություններն են, որ դարձյալ առաջ են եկել տարնմանման ու առնմանման օրենքով. մի օրենք, որ այս դեպքում ոչ միայն «փ»-երի, այլև երկու տարբեր վանկերում գտնվող ղ-երի հիմքերն է խաբխել:

Նվ իրոք. ինչպես որոշ բարբառներում (Վան, Ագուլիս և այլն) բառի մեջ երկու ղ գտնվելու դեպքում նրանցից առաջինը դառնում է ն (օրինակ՝ աղեղն>անեղ), ո (օրինակ՝ բաղեղն>պոռեղ) կամ վ (օրինակ՝ խաղեղ>խավղ)՝, այնպես էլ մեր հիշատակած ձևերի մեջ առաջին ղ-ն տեղի է տվել երկրորդի ազդեցությանը և փոխարինվել ս-ով: Նվ մինչև անգամ որոշ բարբառներում էլ այդ ս-ն է աղեղ երկրորդ ղ-ի վրա և, նմանեցնելով իրեն, առաջ բերել պրսպալ (դրանից նաև պսալ) ձևը. այստեղ էլ արժև հիշել և այն, որ Գորիսի խոսվածքը պսպղալ-ի շիմաց ռենի փրսպրղալ, որի մեջ էլ, իսկայն, բառասկզբի փ-ն արդյոք տարնմանման հնագույն, թե՛ նոր արտահայտություն է, դժվար է ճիշտորոշորոշել:

* * *

Ի՞րրե ամփոփում այս ամբողջ շարադրանքի, մենում էլ ասել, որ մեր կատարած վերլուծությունները մեծ մասամբ լիակատար ստուգաբանություններ չեն և հետևաբար ուղղակիորեն արմատների ծագումը չէ, որ երևան են հանում: Բացի բնաձայնական դիտված կաթիլ և տրոփիլ բառերից, մյուսները ընկած են իրենց բաղադրության և հայերենի պատմական զարգացման ընթացքում կրած ձևափոխությունների տեսակետից: Նվ ըստ այդմ էլ հենց նրանք, կարելի է ասել, բաժանվում են երկու խմբի. մի խմբի մեջ են մտնում սմլել, կուշ, ճկկ, շոկ, «շկակկ», պլպլալ, պսպլալ բառերը, որոնք, ազանդված չլինելով հին մատենագրության մեջ, ներկայացնում են համապատասխան հին ձևերի այլափոխությունը կամ տարբերակը, իսկ մյուս խմբի մեջ էլ մտնում են տեղեկ, ընկիճեալ և զսմլ բառերը, որոնք բացի վերջինից, գործածական չլինելով գրաբարում, կազմում են արմատի ու ածանցի միաբնություն. ըստ որում եթե այս դեպքում էլ որոշ ձևեր (ընկիճեալ) իրենց ծագմամբ դարձյալ մտնում են անստույգ, ապա մի քանիսն էլ (տեղեկ, զսմլ), կապվելով արմատական ձևերին (տեղի, ամբ), դասվում են ստուգաբանված բառերի շարքը: Չնայած այդ ամենին երկու դեպքում էլ նման մեկնությունները (եթե, իհարկե, նրանք ճիշտ են) չեն կարող կարևոր և արժեքավոր չլինել հայերենի բառադանձի, նրա բազմադարյան պատմության ու բարբառագիտության համար՝ նրանց վերաբերող առանձին աղոտ հարցերը լուսաբանելու տեսակետից:

¹ Դրանց մասին տե՛ս Հ. ր. Աճառյան, Հայերեն գավառական բառարան, էջ 914:

² Տե՛ս Հ. ր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 6, էջ 1135—1136:

³ Հմմտ. Հ. ր. Աճառյան, Հայերեն գավառական բառարան, էջ 929—930:

⁴ Օրինակները բերվում են Հ. ր. Աճառյանի «Վանություն վանի բարբառի» աշխատությունից (Երևան, 1953, էջ 71):

ЭТИМОЛОГИЧЕСКИЕ ЗАМЕЧАНИЯ

Ал. С. МАРКАРЯН

(Резюме)

Несмотря на то, что арменоведение достигло больших успехов в области этимологии, тем не менее значительная часть слов и корней словарного состава армянского языка остается еще этимологически нестолкованной. Исходя из этого, автор в своей статье делает несколько этимологических замечаний, относящихся к следующим словам: *սփռել* («сохнуть, иссохнуть»), *կուշ* (употребляется только в составных глаголах, например *կուշ դալ* — «ежиться, съежиться, сжиматься», *կուշ ածել* — «сжимать» и т. д.), *ընկիծեալ* (причастная форма слова *ընկծել* — «превозмогать, превозмочь, подавлять, подавить»), *ճկել* («гнуть, вогнуть, пригибать, пригнуть»), *կաթիլ* («капля»), *տեղեալ* («осведомленный, сведущий, знающий»), *դամր* («мучная пыль в мельнице»), *տրոփել* («бить, стучать»), *շնել* («тарашить, вытарашить, пучить, выпучить»), *շկակել* (от слова *շրկանալ* — «раскаляться, раскалиться»), *լլլալ* («блистать, сверкать») и *լլլալ* («сверкать, блестеть»).

На основе соответствующих языковых фактов автор, анализируя все эти слова, приходит к заключению, что:

а) слова *կաթիլ* (*kathil*) и *տրոփել* (*trophel*) имеют звукоподражательное происхождение;

б) слова *սփռել*, *կուշ*, *ճկել*, *շնել*, «շկակել», *լլլալ* и *լլլալ*, которые отсутствуют в древнеармянском языке, являются измененными формами слов — *ցամաքել* («сохнуть, высыхать»), *դուճ* («колени»), *դճել* («сгибать»), *աշտել* («благословить, почтить»), *շրկանալ* («раскаляться, раскалиться») и *լլլալ* («сверкать, блистать»);

в) слова *տեղեալ*, *ընկիծեալ* и *դամր*, из которых последнее не употреблялось в грабаре, являются производными, причем каждое из них представляет собой слияние корня с суффиксом или частицей (ср. *տեղի + ալ* > *տեղեալ*, *դ + ամր* > *դամր*, *ընկ + ծել* > *ընկ + ծել* > *ընկիծել* > *ընկիծեալ*).

Таким образом, кроме слов *կաթիլ* («капля») и *տրոփել* («бить, стучать»), рассматриваемых как звукоподражательные, остальные слова анализируются с точки зрения их состава и видоизменений, происходивших в процессе исторического развития армянского языка.